

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության Գախարար Վիգեն Սարգսեանի պատմական այցելությունը Գանատա



Կարդալ էջ 3



Հաւալի ՀՅԴ «Սարգիս Զէյթեան» կոմիտէութիւնը նշեց իր 25-ամեակը



Նոյեմբեր 15-ին, Գանատայի Վանդուվըր քաղաքին մէջ կայացաւ ՄԱԿ-ի խաղաղարարութեան նախարարական համաժողովը, որուն իր մասնակցութիւնը բերաւ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը՝ Պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանի գլխավորութեամբ: Համաժողովին բացումին մասնակցեցաւ նաեւ Գանատայի արեւմտեան շրջանի Հայ դատի յանձնարարութեան պատուիրակութիւնը: Մանրամասնութիւնները կարդալ էջ 3:

Կարդալ էջ 5

2017

CR-V

STARTING FROM

\$26,890*



Image for illustration purposes only.

HONDA

GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

◀ OPEN SATURDAYS ▶

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobasarian



HONDA

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



ARZ
fine foods

*Home to
Authentic
Mediterranean Gourmet*



Հայաստանի Հանրապետության Պաշտպանության Գնահատման Կոմիտեի Վիզիտի Մարզման Կազմակերպության Գրասենյակի Այցելուությունը Գանատա

Մոնթրեալի մէջ կայացած ժողովրդային հաւաքին զեկուցեց ՀՀ Պաշտպանության Գնահատման Կոմիտեի Վիզիտի Մարզման



Միացեալ Նահանգներ եւ Գանատա կատարած այցելութեան շրջագիծին մէջ, Նոյեմբեր 16-ին Հայաստանի Պաշտպանութեան նախարար Վիզիտի Մարզմանի գլխավորած պատուիրակութիւնը այցելեց Մոնթրէալի Royal Military College Saint-Jean ուսումնական վարժարանը եւ ծանօթացաւ ուսումնարանի գործունէութեան:

Նոյն օրուան երեկոյեան, նախարար Սարգսեան, Քեպէզի Հայ Համայնքի միացեալ մարմնի կազմակերպած եւ ՀՀ դեսպանատան կողմէ հովանաւորուած ժողովրդային հաւաքի գլխավոր զեկուցող բանախօսն էր: Հաւաքը տեղի ունեցաւ Մոնթրէալի Հայ Կեդրոնին մէջ:

Նախարարը զեկուցեց հայկական բանակի սպառազինման, մարտական դիրքերուն մէջ ընթացող ճարտարագիտական եւ արհեստագիտական աշխատանքներուն, ուսումնական կենտրոններուն, զարգացման ծրագիրներուն, սահմանային իրադրութեան, ապրիլեան պատերազմէն ետք կատարուած ծրագիրներուն, դարբարդեան տագնապի բանակցային հորիզոնին եւ շարք մը այլ հարցերու:

Նախարարը հետագործ ակնարկով անդրդարձաւ Հայոց բանակի անցած ուղիին եւ ըսաւ, որ կամաւորական շարժումով ծնունդ առած Հայոց բանակը, այսօր Հարաւ-կովկասեան տարածաշրջանին մէջ հզօրագոյնն է:

Նախարար Սարգսեան ներկայացուց բանակի արդիականացման եօթնամեայ ծրագիրը, որ կը նախատեսէ մարտունակութեան կենսագործում, ուսումնարարական կենտրոններու, առաջնագիծի մարտական դիրքերու կահաւորում, նորագոյն սպառազինութեամբ զինատեսակի համալրում, ուսումնարարական որակի բարձրացում, հաշմանդամ զինծառայողներու հոգատա-

րութեան բարելաւում, արդարութեան – հանրային վստահութեան ամրապնդում եւ ուսումնական կրթութեան որակի բարձրացում:

Նախարարը յատկապէս շեշտեց, որ Արցախի Ապրիլեան պատերազմէն ետք, գլխաւոր փոփոխութիւնը, որ տեղի ունեցած է վերջին տարուան ընթացքին այն է, որ առաջնագիծը որակապէս փոխուած է, արհեստագիտական սարքաւորումներու եւ տեսադիտարկման սարքերու տեղադրումով: Այս ձեւով Հայ դիրքապահ զինուորի ծառայողները աւելի ապահով դարձած է:

Նախարարը յիշեցուց նաեւ, որ Հայաստանի Հանրապետութեան իւրաքանչիւր 40-րդ քաղաքացին զինուած ուժերուն մէջ ծառայող է: Ան ըսաւ, որ այս իրողութիւնը, թուային առումով մեզ արդէն կը դարձնէ Ազգ-բանակ:

Հաւաքի աւարտին նախարարը պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն:

Պաշտպանութեան նախարար Վիզիտի Մարզման այցելեց «Հորիզոն» խմբագրատուն

Գանատա կատարած այցելութեան շրջագիծին մէջ, Նոյեմբեր 17-ին Հայաստանի Պաշտպանութեան նախարար Վիզիտի Մարզմանի գլխավորած պատուիրակութիւնը Մոնթրէալի մէջ այցելեց «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրատուն, ուր հիւրընկալուեցաւ Գլխաւոր խմբագիր Վահագն Գարագաշեանի եւ վարչական պատասխանատու Սիլվա Էսրամեանի կողմէ: Խմբագիր Վահագն Գարագաշեան նախարարին ծանօթացուց տեղեկատուական դաշտին մէջ «Հորիզոն» շաբաթաթերթի անդամները եւ անոր յանձնեց «Հորիզոն» թերթի թիւերէն օրինակներ: Այցելութեան աւարտին տեղի

ունեցաւ յատուկ հարցազրոյց նախարարին հետ «Հորիզոն» շաբաթաթերթի եւ «Ապագայ» շաբաթաթերթի խմբագիրներու մասնակցութեամբ: Նոյն օրը նախարարը այցելեց Ս. Յակոբ ազգային վարժարան եւ ՀԲԸՄ-ի «Ալեք Մանուկեան» վարժարան:

Նախարար Վիզիտի Մարզման այցելեց Լաւալի Հայոց Ցեղասպանութեան յուշարձան

Միացեալ Նահանգներ եւ Գանատա կատարած այցելութեան շրջագիծին մէջ, Նոյեմբեր 17-ին Հայաստանի Պաշտպանութեան նախարար Վիզիտի Մարզմանի Գանատայի Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութեան ընկերակցութեամբ այցելեց Լաւալի Հայոց Ցեղասպանութեան յուշարձան եւ ծաղկեպսակ զետեղեց:

ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան պատուիրակութիւնը մասնակցեցաւ ՄԱԿ-ի խաղաղարարութեան նախարարական համաժողովին

Նոյեմբեր 15-ին, Գանատայի Վանգուվըր քաղաքին մէջ աւարտեցաւ ՄԱԿ-ի խաղաղարարութեան նախարարական համաժողովը, որուն իր մասնակցութիւնը բերաւ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը՝ Պաշտպանութեան նախարար Վիզիտի Մարզմանի գլխավորութեամբ:

Համաժողովի հիմնական թեմաները նուիրուած էին ՄԱԿ-ի խաղաղարար առաքելութիւններուն արդիւնաւէտութեան բարձրացման: Բանախօսներուն կարծիքով՝ ՄԱԿ-ի անդամ պետութիւնները պէտք է յստակ քայլեր ձեռնարկեն այս ուղղութեամբ:

Առանձնապատուկ ընդգծուել է

խաղաղարար առաքելութիւններուն մէջ կին զինուորականներու թիւի աւելացման անհրաժեշտութիւնը: Կառաջարկուի զայն հասցնել 15 տոկոսի:

Համաժողովին ընթացքին ելոյթ ունեցրէ Գանատայի վարչապետ Ճասթին Թրիւտօն, որ ներկայացուցեց է «Վանգուվըրեան սկզբունքները», որոնք պէտք է կանխեն երեխաներու ստիպողական մասնակցութիւնը մարտական գործողութիւններուն:

Համաժողովին աշխատանքներուն մասնակցեց է նաեւ աշխարհահռչակ դեսպանուհի, ՄԱԿ-ի բարի կամքի դեսպան Անժելինա ժոլին, որուն ելոյթը նուիրուած էր ողջ աշխարհի մէջ սեռական բռնութիւններու դէմ միասնական պայքարի անհրաժեշտութեան:

Նշենք, որ վերոնշեալ համաժողովին բացումին մասնակցեցաւ Գանատայի արեւմտեան շրջանի Հայ դատի յանձնախումբի պատուիրակութիւնը:

ՄԱԿ-ի խաղաղարարութեան նախարարական համաժողովին մասնակցելէ ետք հայկական պատուիրակութիւնը այցելած է Հայ կեդրոն, ուր Պաշտպանութեան նախարար Վիզիտի Մարզման հանդիպում ունեցած է Վանգուվըրի Հայ Համայնքի ներկայացուցիչներուն հետ: Հանդիպման մասնակցեց է նաեւ Գանատայի Հայաստանի Հանրապետութեան դեսպան Լեոն Մարտիրոսեան:

Գանատահայ Համայնքի ներկայացուցիչներուն խնդրանքով Վիզիտի Մարզմանը անդրադարձր է հայկական զինուած ուժերու արդիականացման աշխատանքներուն, մասնաւորապէս՝ բանակի մարտունակութեան բարձրացման, նոր սպառազինութեան ձեռքբերման, մարտական հերթապահութիւնը առաւել անվտանգ դարձնելու ուղղութեամբ տարուող աշխատանքներուն:

ԼՈՒՐԵՐ ՄՈՆԹՐԷԱԼԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԷՆ

- Նոյեմբերի 14-ին, տեղի ունեցավ հայաստանաբնակ բեմադրիչ ծիւան Աւետիսեանի «Վերջին Բնակիչը» ֆիլմին ցուցադրութիւնը, Ս. Յակոբ վարժարանի Բասորմանեան թատերասրահին ներս: Բեմադրիչն ու ֆիլմը ներկայացուց «Սանահին» ֆիլմի ակումբի տնօրէն՝ Ընկ. Վիգէն Թիւֆէնքեանը: Ներկաները մեծ հետաքրքրութեամբ հետեւեցան ֆիլմին եւ բարձր գնահատեցին ֆիլմին պատգամը որ մարդկութեան եւ խաղաղ ապրելու մասին էր: Աւարտին ներկաները առիթը ունեցան բեմադրիչին ուղղելու իրենց հարցումները: Նշենք, որ սոյն ֆիլմը այս տարի Scandinavian film festival-ին արժանացած էր «Լաւագոյն գեղարուեստական ֆիլմ» եւ «Լաւագոյն դերասան» զոյգ մրցանակներուն:



Նոյն օրուան ընթացքին, բեմադրիչը առիթը ունեցավ այցելելու Սբ. Յակոբ վարժարանի աւարտական դասարանի աշակերտները, «Հորիզոն» Շաբաթաթերթի խմբագրատունն ու Ազգային Առաջնորդարանը:



- Շաբաթ Նոյեմբեր 18-ի երեկոյեան, Պոլսահայ Կեդրոնէն ներս տեղի ունեցավ «Children of Vank» վաւերագրական ֆիլմի ցուցադրութիւնը: Ձեռնարկը կազմակերպուած էր Համազգայինի, Թէքէեան Մշակութային Միութեան, ՀԲԸՄ-ի եւ Պոլսահայ Մշակութային Միութեան կողմէ: Ձեռնարկին բացումը կատարեց Պոլսահայ Միութեան ներկայացուցիչ Ոսկան Հազարապետեանը եւ ապա հրաւիրեց «Հորիզոն» շաբաթաթերթի վարիչ խմբագիր Վահագն Գարաբաշեանը որպէսզի ներկաներուն փոխանցէ հակիրճ պատմականը Տերաթի իսլամացած հայերուն մասին: Ֆիլմին աւարտին, հեռակայ կապով (skype) ներկաները առիթը ունեցան հարց-պատասխանի, Գերմանիա բնակող ֆիլմի արտադրիչ Քաղիմ Կունտուկանի հետ:



- Կիրակի 19 Նոյեմբերին, Համազգայինի «Քնար» երգչախումբը, մաս կազմեց Հ.Յ.Դ. Լաւալի «Սարգիս Զէյթեան» Կոմիտէութեան 25-Ամեակի տօնակատարութեան գեղարուեստական յայտագրին, ղեկավարութեամբ Լոուի Անթունեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ ընկՏ. Ռիթա Շամբեանի: Երգչախումբը կատարեց հանդէսին բացումը Հայաստանի Հանրապետութեան օրհներգով եւ ՀՅԴ-ի քայլերգով, իսկ աւարտին հանդէսին փակումը կատարեց «Ես իմ անուշ Հայաստանի» եւ «Արդեօք ովքեր են» նորամշակուած երգերով, բարձր խանդավառութիւն ստեղծելով ներկաներուն մօտ:

Համազգային Մոնթրէալի «Սանահին» մասնաճիւղի վարչութիւն

Հոգեհանգիստ ի յիշատակ Գուրգէալ ՀՄԸՄ-ականներու



ՀՄԸՄ «ԿԱՄՔ» Մոնթրէալի մասնաճիւղը եւ ՀՄԸՄ Լաւալի մասնաճիւղը այս տարի եւս միութեանէս առ յաւէտ հեռացած հաւատարիմ անդամներուն յիշատակը յաւերժացնելու համար հոգեհանգստեան պաշտօն կատարեցին Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ եւ Լաւալի Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ Կիրակի 19 Նոյեմբերին յաւարտ Ս. Պատարագին, որմէ ետք կոկիկ հիւրասիրութիւն մը տեղի ունեցավ Հայ Կեդրոնիս «Ա. Ահարոնեան» եւ Լաւալի «Պարոնեան» սրահներէն ներս: Նշենք թէ սոյն արարողութեան ներկայ էին Մասնաճիւղիս Սկաուտական խումբերը, որոնք օրինակելի եւ տիպար ձեւով կատարեցին իրենց պարտականութիւնը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսու, կը տեղեկացնենք, թէ Գանատայի Հայոց Թեմի հոգեւորականներէն՝ Լաւալի Ս. Գէորգ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Տ. Գաբրիէլ Քհնյ. Գամայեան, Հինգշաբթի, 9 Նոյեմբեր 2017-էն սկսեալ կը դադրի հովուական իր պաշտօնէն եւ յետ այսորիկ մաս չի կազմեր Թեմիս հոգեւորականաց դասին:



ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՐԱՆԻ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ Մոնթրէալ, 14 Նոյեմբեր 2017

CIBC
Aline Shnorhokian
Mortgage Advisor
Tel: 1 866 231-8876
Fax: 450 688-7555
Cell: 514 797-1375
aline.shnorhokian@cibc.com

Groupe Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7
Sutton
ALBERT ARKILANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker
aarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596
*certaines conditions s'appliquent

NISSAN | VÉHICULES D'OCCASION | **HONDA**
CERTIFIÉS | **GABRIEL**
Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned
kasadourian@gabriel.ca
7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite
AZIG Driving School
Tel: 514-336-1110
Moniteur-Instructeur
AUTOECOEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II

Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan
NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant
nat.skaff@gmail.com
Tel. (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7
Services available in Armenian, Arabic, English and French

BRING YOUR OWN WINE
NAZARETH
CLASSIC GRILL
550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644
AUTO SAMSON
MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT
4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

RE/MAX
ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԵԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker
C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR MARIE-CLAIRE
CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)
2535 de Salaberry, Montréal
Tél: 514.334.7830

Լաւալի ՀՅԴ «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութիւնը Աշեց իր 25-ամեակը



(Լուսանկարները՝ Մայք Թաշճեանի)

Կիրակի, 19 Նոյեմբեր 2017-ին, Բասարմաճեան սրահին մէջ տեղի ունեցաւ Լաւալի ՀՅԴ «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան 25-ամեակի տօնակատարութիւն, կազմակերպութեամբ «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան:

Հայաստանի Հանրապետութեան քայքայեցող բացումը կատարուեցաւ ձեռնարկին, կատարողութեամբ Համագայինի «Քնար» երգչախումբին, ղեկավարութեամբ տիկին Լուի Անթունեսանին, դաշնակի ընկերակցութեամբ տիկ. Ռիթա Շամեանին:

Ձեռնարկի բեմավարներ ընկերուհի Մարի Յովհաննէսեան եւ ընկեր Արարատ Թորոսեան բացման խօսքով հանդէս եկան, որոնք ողջունելէ ետք ներկաները, մէջբերեցին Սիմոն Զաւարեանին ուղղուած Սիմոն Վրացեանի նամակէն՝ Գանատայի հասարակական կեանքէն ներս Դաշնակցութեան ունեցած դերակատարութեան մասին:

«Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան կազմաւորման եւ առ այսօր գործունէութեան մասին ընկեր Սերժ Եսայեանի պատրաստած տեսերիզի ցուցադրութենէն ետք բեմավարները կարգացին «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան ուղերձը այս առթիւ, որուն մէջ կոմիտէութիւնը կը յայտնէր իր պատրաստակամութիւնը շարունակելու նախորդ կոմիտէութիւններուն պատուաբեր երթը, միշտ նեցուկ կանգնելու հայ ազգին՝ հայրենիքի մէջ թէ՛ այլուր:

Անկէ ետք տիկ. Սոնա Թիթիգեան Կէտիկեան ասմունքեց եզուարդ Պոյաճեանի «Դաշնակցականը», որուն յաջորդեց օրուան պատգամաբեր՝ «Հայրենիք»-ի եւ «Ասպարէզ»-ի նախկին խմբագիր, հրատարակագիր ընկ. Վաչէ Բրուտ-

եանի բանախօսութիւնը:

Ընկեր Վաչէ նախ անդրադարձաւ 20-րդ դարու վերջին տասնամեակներուն Դաշնակցութեան մշակած քաղաքական միտքին ու մամուլի ու կազմակերպական աշխարհին մասին, որուն բառացիօրէն ղեկավարը հանդիսացած էր Սարգիս Զէյթլեան: Ան նշեց. «Համաշխարհային քաղաքական ու դադափարական այդ օրերու պայքարներու միջավայրին մէջ մեզի համար կը ստեղծուէին 3 անհրաժեշտութիւններ՝ դադափարական վերանորոգման, հայութեան իրաւունքներու պայքարի նոր ուղիովարութեան, բայց մանաւանդ՝ կազմակերպական ներքին վերանորոգման ու արդիականացման բնագաւառներէն ներս»: Ան յայտնեց, թէ Զէյթլեան հանդիսացաւ կազմակերպական ուժեղացումին համահայկական տարողութիւն տուող աննահանջ մարտիկը, եւ թէ մենք յամառօրէն կը հետապնդենք մեր ժողովուրդին ու հայրենիքին շահերը, անգիշող ենք մեր շահերուն նկատմամբ, եւ Սարգիս Զէյթլեան կը մարմնաւորէր դաշնակցականի այս յամառութիւնը: Բրուտեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Այս օրերուն, երբ մենք կը շարունակենք մեր քաղաքական վարքագիծը, տեղ-տեղ յառաջխաղացք արձանագրելով, ուրիշ տեղեր խոչընդոտներու հանդիպելով, անկախ մեր ձեռք ձգած արդիւնքներէն, կրնանք հանգիստ խղճով յայտարարել բոլորին, որ մենք կը գտնուինք ճիշդ ուղիին վրայ: Այն ուղիին, որուն ամենէն պայծառ տեսաբանը հանդիսացաւ Սարգիս Զէյթլեանը: Թող հանգիստ մնայ իր հոգին, որովհետեւ Դաշնակցութիւնը կը շարունակէ այդ ուղին»:

Պատգամաբերի խօսքին յաջորդեց

մենեք՝ կատարողութեամբ տիար Սարգիս Պարսեմեանին, որ բացառիկ ապրումով եւ վարակիչ յուզումով մեկնաբանեց «Երգ փառապանծ Դաշնակցութեան» եւ «Հայաստան աշխարհ»-ը:

ՀՅԴ Բիւրոյի անդամ ընկ. Յակոբ Տէր Խաչատուրեան հանդէս եկաւ սրտի խօսքով, որուն մէջ ան նոյնպէս անդրադարձաւ Լիբանանի մէջ Դաշնակցութեան ամբողջ կառոյցին ապրած զարթօնքին եւ որուն մէջ մեծ ներդրում ունեցած էր ընկեր Սարգիս Զէյթլեան: Ան նաեւ անդրադարձաւ Լաւալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան կազմաւորման եւ յարակից միութիւններուն աջակցութեան, ապա եզրափակեց ի խօսքը յայտնելով. «Եկած է պահը, որ մենք ամբողջական նուիրումով եւ զոհողութեամբ ծառայենք ողջ հայութեան՝ ի շահ մեր գերագոյն նպատակներուն, ի շահ մեր յաւերժական հայրենիքին»:

Գանատայի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ Տ. Բարբէն Արք. Չարեան յայտնեց իր օրհնութեան խօսքը, որուն մէջ ան նախ շնորհակտորեց «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան 25-ամեակը եւ կոչ ուղղեց ըսելով. «Կոմիտէութեան 25-ամեակին առթիւ իմ կողմէն է, որ Սարգիս Զէյթլեաններու շունչով եւ ոգիով շարունակէք ձեր նուիրական առաքելութիւնը՝ յանուն հայրենիքի, յանուն հայութեան վեհ շահերուն եւ

յանուն մեր արդար իրաւունքներուն հատուցման»:

Ձեռնարկը աւարտեցաւ «Քնար» երգչախումբին կողմէ «Ես իմ անոյշ Հայաստանի» եւ «Արդեօք ովքե՞ր են» երգերու կատարողութեամբ եւ բեմավարներուն շնորհակալական խօսքերով՝ ուղղուած բոլոր անոնց, որոնք սատարեցին սոյն ձեռնարկին իրականացման:

Ձեռնարկէն ետք Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի մարզասրահին մէջ հիւրասիրութեան ընթացքին խօսք առին «Սարգիս Զէյթլեան» կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Վարուժ Գալուստեան եւ կոմիտէի անդամ Ներսէս Լիպարեան: Անոնք յատուկ շնորհակալութիւն յայտնեց ձեռնարկի յանձնախումբին՝ իրենց տարած անխնայ աշխատանքին համար: Ապա տեղի ունեցաւ 25-ամեակի կարկանդակի հատուած՝ ձեռամբ «Սարգիս Զէյթլեան» կոմիտէութեան կազմաւորման օրերուն ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Վաղարշ Էհրամճեանի եւ կոմիտէի առաջին հերթապահ ընկեր Արտո Գարրիէլեանի: Անոնք հանդէս եկան իրենց սրտի խօսքերով, որուն յաջորդեց ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Ռաֆֆի Տօնապետեանի սրտի խօսքը:

Սոնա Թիթիգեան Կէտիկեան

Voyages **HAIG** Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐՍԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

ALINE BEKEREJIAN

NOTAIRE • NOTARY

ՆՈՏԱՐ ԱԼԻՆ ՊԵՔԵՐԵՃԵԱՆ

Achat	Առեւտուր	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսաւորում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuratoin	Փոխանորդագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Շաբաթօրէնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

Սարգիս Զեյթունացի Ռաշնակցական Խմբագիրը, Գործիչը, Ղեկավարը

Ընկ. Զեյթունացիների կազմակերպմամբ պարբերաբար կը հանդիպէինք «Քրիստոսափոր» կոմիտէութեան ընկերներէն մէկուն տունը: Ընկ. Զեյթունացի կողքին կ'ըլլային՝ Եղուարդ Բատոյեանը, Վառժ Եղբայրեանը, Սեդրակ Պալեանը, Նազո Գարագաշեանը եւ ուրիշներ: Ընկ. Զեյթունացի մեր կատարելիք աշխատանքներուն գծով ուղղութիւններ կու տար, ինչպէս նաեւ կը լսէր կատարուած աշխատանքներուն մասին շարքերուն ընկալումն ու հակազդեցութիւնը: Այս հանդիպումները միայն «Քրիստոսափոր»-ի եւ «Զաւարեան»-ի տղոցմով չէին սահմանափակուել, երբեմն ներկայ կ'ըլլային նաեւ այլ կոմիտէութիւններէ ընկերներ, ինչպէս՝ Գէորգ Գանտաշեան, Յովհաննէս Պէրպէրեան, Յովհաննէս Քէլէշեան, Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Վարուժան Աղասարգիսեան եւ ուրիշներ:

Այդ հանդիպումներու ընթացքին ընկ. Զեյթունացիներ առաջ կը մղէր այն թեզը, որ կուսակցութիւն մը պէտք է պատրաստ ըլլայ հաւատարմօրէն ու լիակատար կերպով ծառայելու իր կոչումին ու առաքելութեան եւ ամէն տեսակ գոհողութիւն յանձն առնէ իր հայրենիքին եւ ժողովուրդին գերագոյն շահերուն ու արժէքներուն պաշտպանութեան համար:

Մեր շարքերն ու մանաւանդ երիտասարդութիւնը պէտք է պատրաստ ըլլան յանձն առնելու հարկ եղած աշխատանքն ու գոհողութիւնները:

Այս աշխատանքները իրենց արդիւնքը տուին, ու կարելի եղաւ շրջաններուն մէջ նուիրեալ, գաղափարական պատրաստութեամբ ու կազմակերպական կարողութիւններով օժտուած ընկերներ կազմելու մէջ ներառել, ինչպէս նաեւ, ընկ. Զեյթունացի հերթապահութեամբ, Լիբանանի շրջանի կազմակերպական կեանքը նոր հունի մէջ կարենալ դնող ԿԿ-ի կազմ մը յառաջացնել:

Ընկ. Զեյթունացի կը հաւատար, որ լիբանանահայ գաղութը իր գրուածքով կրնար յատուկ գերակատարութիւն ունենալ սփռուած հայ միւս գաղութներու կազմակերպական ու Հայ դատի պահանջատրական աշխատանքներուն մէջ՝ մասնաւորաբար գաղութներու կրթական, մամուլի, վարչական եւ այլ բնագաւառներէ ներս մարդուժ տրամադրելով: Այդ համոզումով ալ աշխատանքի լծուեցաւ:

Իր հերթապահութեան օրով «Ազգակ»-ը օժտուեցաւ նոր տնօրէնով՝ Երուանդ Փամպուլեան:

Խմբագրութեան միացաւ Պօղոս Մնայեանը: Աշխատանքի հրահրուեցան երիտասարդ աշխատակիցներ, ու թերթը սկսաւ հրատարակուիլ ութ էջերով:

ԼՕՈՒ-ի շարքերը երիտասարդականացան:

Համալսարանաւարտ ընկերուհիներ վարչութիւններու մաս կազմեցին:

Կրթական կեանքին մէջ համալսարանական բարձր ուսման տէր երիտասարդ ընկերներ ստանձնեցին ազգային վարժարաններու տնօրէնութեանց պաշտօնները: Դպրոցներու կրթական մակարդակը բարձրացաւ, ինչպէս նաեւ գործող նախակրթարանները կարելի եղաւ երկրորդականի բարձրացնել:

Կազմակերպական կեանքին մէջ կոմիտէութիւնները ունեցան աշխոյժ գործունէութիւն, յատկապէս շարքերու դաստիարակութեան ու ակմբային կեանքի աշխուժացման գծով՝ մշակութային նոր ձեռնարկներով ներգրաւելով երիտասարդութիւնը:

Յատուկ վերելք արձանագրեց Զաւարեան ուսանողական միութիւնը ո՛չ միայն անդամներու թիւի յաւելումով, այլեւ՝ Հայ դատի աշխատանքներու ծիրէն ներս նոր ձեռնարկներու կազմակերպումով (սեմինարներ, որմագրներ, քայլարշաւ, թրքական դեսպանատան դէմ ուսանողական ցոյց եւ այլն): Այս բոլորը աշխուժացցին համալսարանական կեանքը՝ Հայ դատի ծանօթացման տեսանկյունէն:

Վերատեսութեան ենթակուեցաւ Պատանեկան միութիւններու կազմակերպական կառոյցը, եւ ուսումնասիրուեցաւ գանոնք երկսեռ երիտասարդական միութեամբ մը փոխարինելու ծրագիրը:

Ընկ. Զեյթունացի ջերմօրէն կը հաւատար հայ քաղաքական կուսակցութիւններու միջեւ գործակցութեան: Հատուածականէն վեր կը կարեւորէր ազգային համախոհութեան ու գործակցութեան ստեղծումը: Մեր իրաւունքներու ձեռքբերման համար հայկական միասնական ճակատով արտաքին աշխարհին ներկայանալը կենսական կը նկատէր:

Իր հերթապահութեան օրով Լիբանանի քաղաքական կեանքէն ներս կարեւորուեցաւ Դաշնակցութեան գերակատարութիւնը, մասնաւորաբար՝ հայ համայնքի իրաւունքներու ձեռքբերման առնչութեամբ, յատկապէս՝ առաջին կարգի պետական պաշտօնեաններու նշանակման գծով, հայկական երեսփոխանական պլոքի վերանորոգմամբ, ներառեալ՝ աւետարանական ակթորը. այս բոլորին համար լիբանանահայ քաղաքական հոսանքները ներկայացնող յարգելի ազգայիններ նշա-

նակուեցան:

Ընկ. Զեյթունացի կը հաւատար, որ ազգի մը գլխաւոր ուժը, յատկապէս՝ անոր ապագայի կերտման գծով, երիտասարդութիւնն է: Ուրեմն պէտք էր աշխատիլ երիտասարդութեան առողջ դաստիարակութեան, անոր բարոյական, կազմակերպական եւ կարգապահական ոգիի խորացման, ազգային ու քաղաքական մտածողութեան զարգացման, գաղափարական վերաթարմացման ու յեղափոխական աւանդներու վերագործման համար:

1967-ի արաբ-իսրայէլեան պատերազմէն ետք, երբ Պաղեստինի ազատագրութեան կազմակերպութիւնը դարձաւ գինեալ ներկայութիւն, Լիբանանի քաղաքական կեանքէն ներս ստեղծուեցաւ փափուկ կացութիւն: Զախակողմեան ուժեր, վստահելով այդ կազմակերպութիւններու գինեալ ներկայութեան, սկսան խոչընդոտներ ստեղծել ու քաղաքական պահանջներ դնել երկրի գործադիր իշխանութիւններուն դիմաց, յատկապէս՝ գործող նախագահին, պաշտօն մը, որ քրիստոնեայ մարտի համայնքին վերապահուած է:

Ի տես ստեղծուած կացութեան՝ Փաղանգաւոր եւ Ազատական կուսակցութիւնները սկսան գինեալ եւ գինեալարժեքեան դասեր տալ իրենց ուսանող ու երիտասարդ անդամներուն՝ Լեռնայլիբանանի մէջ գինեալարժեքեան յատուկ բանակավայրեր հաստատելով: Տեղական կուսակցութիւններու այս աշխատանքը մեր՝ գաւարեանականներու ուշադրութենէն չէր վրիպած: Սազո Սարգիսեանն ու ես տեղացի ուսանող ընկերներու ընկերակցութեամբ պատեհ առիթով մը այցելեցինք Հարիսայի մէջ փաղանգաւորներու բանակավայրը եւ ներկայ եղանք անոնց փորձերուն:

Բանակողները, որոնց մէջ կային կարգ մը հայ տղաք, յատուկ համազգեստներ հագած եւ լիբանանեան բանակի սպաներու հսկողութեամբ, զանազան տրամաչափի գէնքերու յատուկ վարժութիւններ կ'ընէին:

Օրին փաղանգաւորներու բանակավայր մեր այցելութեան մասին տեղեկ պահեցինք ընկ. Զեյթունացի: ԿԿ-ը տեղեկ էր քրիստոնեայ կուսակցութիւններու նախաձեռնութիւններէն եւ քաջալեր էր, որ գինեալարժեքեան փորձերու սկսինք գէթ մենք՝ գաւարեանականներս, նկատի ունենալով, որ պաղեստինցի գինեալներու եւ լիբանանեան բանակին կամ կուսակցութիւններուն միջեւ բախումներու պարագային արեւմտեան Պէյրութի մեր հաստատութիւնները՝ առաջնորդարան, դպրոցներ եւ ակումբներ, կրնային թիրախ դառնալ, եւ հարկ էր գանոնք պաշտպանել եւ արգելել, որ գինեալներ մեր կեդրոնները մուտք գործեն:

Ընկ. Զեյթունացի հետ մարզումի աշխատանքներուն համադրումը, իբրեւ «Զաւարեան»-ի ատենապետ, վստահուած էր Սազո Սարգիսեանին: Ժամանակ մը ետք Սազոն վարչութեան տեղեկացուց, որ ընկ. Զեյթունացի կարգ մը գաւարեանականներ գիշեր մը յատուկ հանդիպումի մը կը հրաւիրէ:

Հանդիպումը կայացաւ Անթիլիաս բնակող մեր պատասխանատու ընկերներէն մէկուն տունը: Այդ տարիներուն Անթիլիասը տակաւին քաղաքէն հեռու, նարնջենիի պարտէզներով շրջապատուած արուարձան մըն էր, ուր քանի մը հայ ընտանիքներ կը բնակէին միայն: Որոշեալ ժամուն շուրջ 15 ընկերներ մէկ առ մէկ հասանք ճշգրտած բնակարանը: Տան հիւրասրահը կիսով լուսաւորուած էր, պատուհաններուն եւ պատշգամի դրան փեղկերը փակ: Տանտէրը տունէն կը բացակայէր մեզ ազատ ձգելով: Ընկ. Զեյթունացի կողքին նստած էին յիսուելի մօտ, լուրջ դէմքերով երկու անձեր: Մէկը ճաշուտ, սեւ աչքերով, սեւ պիտերով, խաղաղ դէմքով: Երկրորդ անձը սրճագոյն բաճկոնով եւ սրճագոյն թաղիքէ ամերիկեան գլխարկ մը գլխուն, դէմքին ոչ մէկ արտայայտութիւն:

Քիչ ետք, երբ բոլոր տղաքը հասան, ընկ. Զեյթունացի խօսք առնելով՝ ներկայացուց երկու ընկերները՝ Սարգիս Ազնաւորեան եւ Անդրանիկ Պաղտասարեան (Բաուպոյ Անդրանիկ), որոնք պիտի ըլլային մեր մարզիչները: Ընկ. Զեյթունացի թելադրեց, որ մեր մարզումներուն մէջ ըլլանք հետեւողական, ճշգրտապահ, գաղտնապահ, լուրջ կարեւորութիւն ընծայենք ընկերներու ցուցմունքներուն, որովհետեւ լուրջ առաքելութիւններ մեզ կը սպասեն:

Վստահաբար ընկեր Սարգիսը մեզմէ մեծ ակնկալութիւններ ունէր կուսակցութեան ապագայ ծրագիրներուն գծով: Մենք բաժնուեցանք երկու խումբի, մէկը՝ քաղաք բնակողներս, ընկ. Ազնաւորեանի գլխաւորութեամբ, միւսը՝ Պուրճ Համուտ բնակողները, ընկ. Պաղտասարեանի առաջնորդութեամբ: Մեր մարզումները շարունակուեցան շուրջ երկու տարի, եւ 1969-ին ու 1973-ին պաղեստինեան կազմակերպութիւններ-լիբանանեան բանակի բախումներու ընթացքին մեզի վստահուեցաւ ազգային հաստատութիւններու հսկո-

ղութիւնը: Հետագային մարզուող ընկերներէն Սազո Սարգիսեանն ու Վաչէ Տարագճեանը կարեւոր դեր ունեցան համակուսակցական մարտական աշխատանքներուն մէջ՝ ընկ. Սարգիսին ակնկալութիւնները ի դերեւ չհանելով:

Ընկ. Սարգիսը յատուկ համարում ունէր Սազոյին նկատմամբ, որուն մէջ կը տեսնէր դաշնակցական ապագայ ղեկավարը: Կը գնահատէր անոր գոհաբերութեան ոգին, զօրեղ անհատականութիւնն ու կազմակերպական կարողութիւնները: Ընկ. Հրայրը առիթով մը ինձի ըսած է. «Սարգիսը՝ Սազոյին մէջ կը տեսնէ իր նմանակը»:

Երիտասարդութեան նկատմամբ ընկ. Սարգիսին ունեցած հաւատքը, անոնց հետ ուղղակի կապ ստեղծելու, անոնց աշխատանքին մղում տալու եւ երիտասարդութեան ու իրենց սերունդին միջեւ բնականոն գործակցութիւն ծաւալելու համոզումներն էին, որ անոր մղումով ու ընկերներ Մարուխեանի եւ Տասնապետեանի ղեկավարութեամբ Լիբանանի 1979-ի Շրջանային ժողովը ԿԿ-ի երիտասարդ կազմ մը ընտրեց, որուն յաջորդեց 1981-ի ՀՅԴ Ընդհանուր ժողովին կողմէ Բ-ի կազմի երիտասարդականացումը:

Ընկ. Սարգիսի նկարագրային յատկանիշներէն էին՝ պարզութիւնը, ուղղամտութիւնը, նրբազգացութիւնն ու ընկերներու նկատմամբ հոգածութիւնը, որ իրեն հետ շփումով կը զգացուէր միայն՝ ներգրաւելով գործակից ընկերները:

Այդ մէկը ես զգացեր եմ, երբ 1978-ին, կիրակի մը, առաւօտ կանուխ հեռաձայնս հնչեց: Օր մը առաջ Լիբանանի կազմակերպութեան Շրջանային ժողովի բացումը կատարուած ու նիստերը սկսած էին: Այդ գիշեր, նիստերու աւարտէն ետք Սազոն տուն հասնելուն՝ սրտի տագնապ անցուցեր եւ հիւանդանոց փոխադրուել էր: Ընկ. Սարգիսը, ընկ. Հրայրն ու ընկ. Հրաչը տեղեկ ըլլալով, առաւօտուն ուզած են հիւանդանոց այցելել՝ Սազոյի սեսութեան:

Ընկ. Սարգիսը գիտնալով, որ ես Սազոյին շատ մօտիկ եմ, ուզած էր զիս տեղեկ պահել, որ ես ալ իրենց ընկերանամ: Ընկերներու ցաւերուն լուռ բաժնեկից էր ան:

Հաճելի գրուեցալից էր ընկ. Զեյթունացի: Խօսակիցներուն ու իր միջեւ գուարթ մթնոլորտ ստեղծող: Ծաւալած այդ անկաշկանդ խօսակցութիւններու ընթացքին կը ջանար առաւելագոյն տեղեկութիւններ քաղել, մանաւանդ՝ այն նիւթերուն շուրջ, որոնք իր գործադաշտէն ու հետաքրքրութիւններու անմիջական ծիրէն դուրս էին: Կ'ուզէր տեղեկանալ՝ կարենալ ճշգրտուելու, մտքերը համադրելու եւ գանոնք կարենալ հիմնաւորելու համար:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի սկզբնաւորութեան էր: Ընկերով մը հետ լուր դրկած էր, որ կիրակի մը իր մօտ՝ Այնճար ելլեմ: Երբ հասայ, ընկ. Սարգիսը տան բակը նստեմ՝ ընկ. Նգրուրեանին հետ կը զրուցէր: Անոնք ձեմարանի մէջ դասընկերներ եղած էին եւ համագիւղացի, ու շատ բան ունէին իրարու փոխանցելիք: Ընկ. Սարգիսի մտահոգութիւնը փաղանգաւոր գինեալներու Պուրճ Համուտէն սանձարձակ ելուձուտն էր, որ երբեմն անհաճոյ դէպքերու տեղի կու տար՝ մեր կազմակերպութեան վարիչ խնդրոյ առարկայ դարձնելով, միեւնոյն ատեն՝ ազդելով հայ ազգաբնակչութեան հոգեվիճակին վրայ: Կը մտածէր մեր գինեալ տղոց կողմէ երկու անցարգելիներ դնել տալ, մէկը՝ Պէյրութ գետի կամուրջին վրայ, երկրորդը Անթիլիաս՝ վանքին մօտ՝ մայրուղիին վրայ, որպէսզի արգելին Փաղանգաւոր գինեալներու Պուրճ Համուտ ելումուտը: Այս գծով, իբրեւ «Աղբիւրեան» կոմիտէի անդամի, կ'ուզէր կարծիքս ունենալ:

Ընկ. Սարգիսին կարծիքը չբաժնեցում՝ ըսի, որ նման նախաձեռնութիւն փաղանգաւոր գինեալներուն ու մեր տղոց միջեւ բախումներու պատճառ պիտի ըլլայ, ու անտեղի գոհեր պիտի տանք, որովհետեւ մեր ընկերութեան մէջ աշխատող փաղանգաւոր պաշտօնակիցներու ուղեկցութեամբ առիթը ունեցած էի այցելելու անոնց գիտութեան զիրքերը եւ տեսած, որ Տրպայէէն մինչեւ Պուրճ Համուտ երկարող լեռնաշղթայի բարձունքներուն վրայ հեռահար թնդանօթներ գետեղած էին՝ արեւմտեան Պէյրութը հարուածելու նպատակով եւ կրնային գանոնք դէպի Պուրճ Համուտ ուղղել, ինչ որ մեզի համար աղէտաբեր կրնար ըլլալ, աւելցնելով, որ Դաշնակցութիւնը իր մարտական փորձառութիւնէն մեկնեմ՝ այլ միջոցներ ունի այս կացութեան առաջը առնելու, պատժելով անոնց պատասխանատուներն ու դեկավարները: Բացատրութիւններս համոզած էին ընկ. Սարգիսը: Երբ պատրաստուեցայ մեկնիլ, յայտնապէս ան գոհացած էր փոխանցած տուեալներէս ու բացատրութիւններէս:

ՅԱՎՈՒ ԵԱՓՈՒԾԵԱՆ (Ծար. 2)



ANI BAKERY

ԱՆԻ ՓՌԱՊԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

Սեփականատր՝ Արսեն Տապալադեան

Ուր կը գտնեք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝, միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով

**Փորձեցեք եւ
գոհ պիտի մնաք**



NEW ADDRESS FROM JANUARY 2016

Ani Bakery Ltd 25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրէ ետք՝ ժամը 2:00
(Երկուշաբթի փակ)



**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com


Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h

Infirmière (jeudi) : 8h30 à 15h

LIVRAISON GRATUITE



Fondation Hayastan-Canada Inc. présente...
Հայաստան համահայկեան հիմնադրամը կը ներկայացնէ՝



«Արմատներու Ձայնը»
Տարեկան Նշահանդես



Ashough Nazell



Sevak Amroyan



Sona Rubenyan

2 Décembre, 2017 à 8:00PM

Centre Arménie
1025 boul. Élisabeth, Laval H7W 3J7



Billets - 80\$
Entrées inclus / Appetizers included
Zorik 515-825-1156
Vardan 514-922-1899

www.himnadram-montreal.org

THE 40 DAYS OF MUSA DAGH

"The struggle of 5,000 people on Musa Dagh... so fascinated me... wished to aid the Armenian people by... about it and bring... the world"

Franz Werfel

TESTAMENT OF THE RESISTANCE
AT THE HEART OF THE ARMENIAN GENOCIDE

1-30 NOVEMBER 2017

Exhibition presented as part of
Neuberger Holocaust Education
Week 2017. Pivotal Moments

Co-presented by the American
Genocide Center and Committee
of Canada and Sora Corning Centre
for Holocaust Education

Exhibition opening:
November 1, 2017, 6:30 PM


On display November 1-30 2017
More info: 416-365-5577

Tel: 416-940-0001, 2000 Spadina Ave., Toronto
788, Yonge Street, Toronto

Opening Hours:
Monday-Friday 1 AM - 4:30 PM
Saturday 9 AM - 5 PM
Sunday 1:30 - 5 PM



NEUBERGER HEW 2017
HOLOCAUST EDUCATION WEEK
November 1-5, 2017



COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



TRY HEARING AIDS
RISK-FREE

Call 416 754-4327

699 Coxwell Avenue
Toronto, ON M4C 3C1
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,
#65 Toronto, ON, M1R 4B9
Tel: 416 754-4327(HEAR)

www.hearingaidsource.ca



- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Oticon Canada Ltd.



hearing aid source

invisible, custom & comfortable



ՀՕՄ-ի Մոնթրեալի «Սոսե» մասնաճիւղը
կը կազմակերպէ

Պատյոյն դէպի Քիւպա / Trip to Cuba

Organized by the A.R.S. Montreal «Sosse» Chapter
Pestana Cayo Coco Beach Resort

Cayo Coco, Cuba

All inclusive (Բոլոր ծախսերը ներառեալ)

Only \$1150.00 / person (dbl. occ.)

April 4 to April 11, 2018 (1 week – 7 nights)

Limited seats. Price guaranteed until Dec. 16

Possibility of a 2 weeks stay

For more information, please call

Lucy Chahinian (514) 531-3247

Email : lucy.manguian@gmail.com



**ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
127-ԸՂ ԱՍԵՆԿԻ ԽՐԱԽԱՆՔ**

Կազմակերպութեամբ

Հ.Յ.Դ. Միհրան Փափազեան

Եւ

Հ.Յ.Դ. Սարգիս Զեյթրեան Կոմիտէի քեանց

Ընկերային յանձնախումբերուն



Երեկոն ժողովրդային, ազգային եւ յեղափոխական երգերով
կը ձոխացնեն երգիչներ

ԳՕԳՕ ԱՍԱՅԵԱՆ, ԱՐՄԷՆ ԱՍԱՅԵԱՆ

Եւ

ԳՕԳՕ ԹԻԹԻՐԱՃԵԱՆ

Տեղի կ'ունենայ Շարաք, 9 Դեկտեմբեր 2017,

Երեկոյեան ժամը 8:00-ին Մոնթրեալի Հայ Կեդրոնէն ներս

Յեմաբերու հասցիքը դիմել

Յասմին Պիլեճեանին Հեռ. 514-831-4755

Տիրոս Սեպուհեանին Հեռ. 514-591-7999

Վահան Վարդանեանին Հեռ. 514-804-1696

Մատարի նուէր \$30.00

Հայ Դատի տարբեր ներստեալ

Manoir Gouin Résidence Certifiée

Résidence pour aînés autonomes et semi-autonomes

À partir de **995\$** (hors taxes) /semaine
Tous les repas, collations et supervision médicale inclus
1½ à 4½

Gicleurs automatiques dans chaque appartement

Մեկը հոս ուրախ եկը
Պրն. Իրեկեան

Պատարագ տեղի կ'որհանայ
մեր ՀԱՆԳԱՏԵԱՆ ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍ:

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

Les encadrements **olympic**

SINCE 1988 OLYMPIC PICTURE FRAMES HAS MADE OR IMPORTED HUNDRED OF THOUSANDS OF FRAMES FOR PRINTINGS, WATERCOLORS, LITHOGRAPHS AND MIRRORS.

OUR CUSTOMERS INCLUDE FRAMING STORES, ART GALLERIES, MUSEUMS, ARTISTS AS WELL AS PRIVATE CLIENTS.

IN STORE WE HAVE MORE THAN 3000 SAMPLES, AS WELL AS 600 READY FRAMES FOR YOU TO CHOOSE. FROM BACKED BY OUR EXPERTISE AND SOLID EXPERIENCE WE WILL ADVISE YOU IN MAKING THE RIGHT CHOICE.

OUR WHOLESALE PRICES ARE MORE THAN COMPETITIVE. BEFORE BUYING COME AND SEE US, YOU WILL BE REALLY PLEASED.

Մեծաքանակ Շրջանակներու Արտադրութիւն

6831, DE L'ÉPÉE,
(ACCÈS PAR BEAUMONT)
MONTRÉAL (QUÉ.) H3N 2C7
TEL./FAX. (514) 495-1930
encadrementolympic.com

COUPON
VALID UNTIL
DECEMBER 2017
15% OFF

NUSUՅՆ Աղետեպներ

— Ի՞նչ ձայն է այս...
Առտուան ժամը երկուքը անց էր, յանկարծ արթնցանք տարօրինակ ձայն է մը: Կ'արծես ջուր կը հոսէր:

Ելայ-ստուգեցի: Բազմիքը ամեն ինչ կարգին էր: Անձրեւ ալ չկար:
— Կ'երեւի հով կայ, տանիքէն ձայն կու գայ— ըսի ու ետ անկողին մտայ:
Կինս չհամոզուեցաւ: Վար իջաւ ստուգելու:
— Եկո՛ւր, շուտ եկո՛ւր,— ձայն տուաւ վարէն:
Անմիջապէս վրաս բան մը առի ու վազեցի վար՝ նկուղը կամ աւելի լաւ բառով մը՝ ներքնայարկը:

Մեծ տարածքին գետինը ջուր լեցուած էր, 2 սմ խորութեամբ ջուր: Արագ հասկցուեցաւ հարցը ինչու՞ն էր, քանի որ ջուրին ուրիշ գայն ալ կը տեսնուէր: Պարտէզը ջրող ծորակը ներսի կողմէն՝ ներքնայարկի առաստաղին մէջ փական մը ունի: Անմիջապէս ելարանը բերի, որ գոցեմ, բայց փականը չկար, եւ իր ամրացուած տեղէն ջուրը ուրախ-ուրախ դուրս կը ցայտէր՝ թէ՛ գետին վազելով եւ թէ՛ ալ առաստաղին մէջ արձակուելով:

Առաջին գործս եղաւ վազել լուացքի սենեակը, ուր քաղաքէն տուն մտնող ջուրի խողովակն էր, ու իջեցուցի անոր վրայ գետեղուած փակիչ կարմիր լծակը, կտրելով ջուրին հոսքը: Աղմուկը կանգ առաւ:

Ի՞նչ պիտի ընէինք: Յաջողութեամբ ժամը անցաւ պատէ-պատ գորգին վրայ լեցուած այդ ջուրը հաւաքելով: Այր ու կին, ձիւն մաքրող բահերէն ամենէն պզտիկով, այլեւ աղբաքաշերով քիչ-քիչ ջուր վերցուցինք գետնէն ու լեցուցինք դոյլերը, պարբերաբար ալ գանոնք երթալ պարպելով, քանի որ չէինք կրնար շատ ծանրացնել, նկատի առնելով մեր կոնակներու իրավիճակը... Յետոյ մէջտեղ հանուեցան հին մեծ անձնոցները, որոնց հիմա նման դերեր կը վստահինք: Անոնք ալ որոշ չափով ծծեցին գետնի ջուրը: Բայց գործը չվերջացաւ: Այս անգամ պաշտօնի կոչուեցան ծոպաւոր աւելները: Անոնցմէ երեքը տակաւին նոստ-նոր էին, իրենց առաջին փորձառութիւնը վաստակեցան: Արդեօք պիտի կարենայի՞, Ուալթ Տիգրիի «Ճանթագիա» գլուխգործոց ժապաւենի հերոս «Կախարդի աշկերտ» Միքի մուկին ըրածին պէս, ոտքի հանել գանոնք, բազմացնել ու գործի լծել... Եթէ չէք տեսած, անպայման ձեռք ձգեցէք ու դիտեցէք այդ ֆիլմը:

Յաջողութեամբ քայլը խողովակագործ գտնելն էր: Նախապէս մեզի այցելած մէկ ընկերութեան ձգած հաշուեցոյցներուն մէջ նկատեցի, որ 2A ժամ սպասարկութիւն կը յաւակնին տալ: Հեռաձայնեցի: Քիչ մը ժամանակ առաւ, մինչեւ որ պատասխանող տիկինը արթննայ: Առաւօտուն կը ստուգեմ, որ այսօր արամադրելի աշխատաւոր մը կը գտնեմ՝ ժամը 10-ին հեռաձայնէ՛, կամ ես քեզի կը հեռաձայնեմ,— ըսաւ,— բայց ապահովութեան համար դո՛ւն ալ փնտոէ. ուրիշ ընկերութիւններ ալ կան... Յետոյ աւելցուց, որ այսօր չաբաթ, 11 նոյեմբերը պետական տօն է, սակերը կրկնապատիկ են:

Շնորհակալ եմ,— ըսի: Ամեն պարագայի առ յոյժ ինչորէն լուծուած էր: Բայց եթէ անմիջապէս չնորոգուէր այդ անպիտան փականը, մենք առանց ջուրի կրնայինք մնալ ամբողջ շաբաթավերջը: Միւս կողմէ՝ հասկցայ նաեւ, որ դիշերով մարդ փնտուելը իմաստ չունէր:

Առաւօտուն, 9-ի տեսները հեռաձայնեցի մեզի նախապէս սպասարկած ուրիշ ընկերութեան մը, բացատրեցի եղելութիւնը:

— Այսօր իսկ անպայման մէկը կը դրկենք: Յաջողութեամբ ժամուան ընթացքին կը հեռաձայնէ ձեզի:

Մեծ շունչ մը առինք: Հիմա կրնայինք նախաճաշել, սառնարանին մէջ պահուող պղծ ջուրէն առնելով՝ մեր սուրճն ալ պատրաստել:

Ժամը տասին միւս ընկերութեան տիկինը հեռաձայնեց, բացատրեցի, որ արդէն մէկը ապահովեցինք: Գոհ մնաց, որ մէջտեղ չենք մնացած: Իրապէս գնահատեցի այս մարդկային ու մարդավայել վերաբերմունքը:

Դէպքերը անկէ ետք ստացան «բնականոն» ընթացք:

Հին փականին կոթառը կամ բունն էր, որ մաշեր էր ու տեղի տուեր, հակառակ որ անոր եւ դուրսի ծորակին միջեւ մնացած ջուր պէտք է ըլլար ու սառէր, սառելով ալ ճնշում բանեցուցած ըլլար փականին վրայ: Նոր փական մը անցուցաւ: Քանի մը տողարի արժողութեամբ: Առիթէն օգտուելով խնդրեցի, որ մեր բազմիքին ծորակին ծայրոցն ալ փոխէ. Քովս կար նոր մը, որ ես չէի կրցած անցընել, իր գործիքին եւ ուժին կարիքը կար: Անվճար կատարեց, ընդհանուր գործողութիւնը սակայն արժեք իմ ժամական վարձատրութեան բազմապատիկը՝ մտածել տալով— ինչպէս միշտ՝ նման պարագաներու— թէ արդեօք սխալ ասպարէզ չէի՞ ընտրած ի վերջոյ...

Կէսօրէ ետք եկան նաեւ երկու շատ հաճոյակատար երիտասարդներ, շինարարական ընկերութեան մը կողմէ: Տան ապահովագրութեան ընկերութիւնը զրկեց գիրենք, որպէսզի առաջին հերթին նախնական կանխագուշական միջոցներ ձեռք առնեն: Կարելի չէր այդ թրջած, խոնաւ պատերը, առաստաղներն ու գետնիները այդպէս ձգել, կրնային բորբոսապատուել ու պատճառ դառնալ շնչառական կամ այլ հիւանդութիւններու, ինչ որ կրնար շատ աւելի մեծ գուժարներ հատուցելու պարտաւորութեան տակ դնել ապահովագրական ընկերութիւնը:

Անոնք ալ ձեռքի յատուկ «խելացի» սարքերով չափեցին, չափափեցին խոնաւութեան աստիճանը բոլոր մակերեսներուն, ապա ուր որ հասանելի էր՝ կտրեցին—հանցին պատերն ու առաստաղները երեսպատող կրիփի տախտակներէն բազմաթիւ մասեր, հանցին գորգը, ապա տեղաւորեցին եօթը մեծ հովահարներ կամ աւելի ճիշտ՝ օգամուղ գործիքներ, որոնք իրենց յառաջացուցած բացուածքներուն մէջ կը մղեն օդը՝ թաց տեղերը չորցնելու համար. գետեղեցին նաեւ հսկայ խոնաւագերծիչ սարք մը՝ յստակ դերակատարութեամբ: Ասոնք գոնէ երեք ամբողջ օր պէտք է անընդհատ գործէին...

Ամեն ձեռով ուղեցին հաւաստիացնել մեզ, որ չմտահոգուինք, ամեն ինչ պէտք եղած ձեռով պիտի նորոգուէր, կահ-կարասին ու անոնց պարունակութիւնը՝ հազարաւոր գիրքերը, շտեմարան մը պիտի փոխադրուէին, նորոգութիւնները ամբողջացուէին եւայլն:

— Որքա՞ն ժամանակ կրնան առնել այս աշխատանքները...

Տեղւոյն վրայ ըլլալիքը կրնար արագ ըլլալ, մէկ-երկու շաբաթէն, սակայն մինչ այդ վնասներու եւ նորոգութեան գնահատման ու այլ վարչական գործեր ալ կային, որոնք կրնային նոյնքան ժամանակ խլել: Շինարարութիւնը կախում պիտի ունենար նաեւ այդ պահուն կապալառու ընկերութեան ունեցած արամադրելիութիւնէն...

— Մի՞շտ նման ստիպողական պարագաներով կը զբաղիք— հարց տուի իրենց:

— Այո՛,— ըսին, մասնագիտութեան պէս բանի մը վերածուած է ասիկա մեզի համար: Երկուքն ալ 17-18 ժամ աշխատած պիտի ըլլային այդ օր:

— Ինչպէ՞ս կը դիմանաք...

Գիտցանք որ քանի մը օր կ'աշխատին մեծ թափով, ապա քանի մը օր ալ հանգիստ կ'ընեն:

Իրենց մեկնելէն ետք հետզհետէ սկսանք անդրադառնալ մեր «աղետի» տարողութեան: Ինչ որ եղաւ կրնար մեր բացակայութեան պատահած ըլլալ: Գետինը գտնուող քանի մը խաւաքարտէ տուփերու ու անոնց պարունակութեան մէկ մասին վնասուածն շատ աւելի մեծ կորուստներ կրնայինք ունենալ, մանաւանդ որ գիրքերուս երկու երրորդէն աւելին հոն՝ ներքնայարկը կը գտնուի, նաեւ բոլոր արխիւներս, յօդուածներս ու թերթերս: Ի՞նչ աղէտ պիտի ըլլար այն ատեն:

Բայց միւս կողմէն վերջիցեցինք անցնող գարնան մեր բնակած շրջանին շատ մօտ տեղի ունեցած ողորմաները, յորդառատ անձրեւին պատճառով, որոնք ոչ թէ 2 սմ, այլ 20 սմ, նոյնիսկ 2 մ ու աւելի կեղտոտ ջուրերով ողողեցին գետամերձ բնակարանները՝ հասնելով մինչեւ գետնայարկերը, մարդիկ տնագո՛ւրկ դարձնելով ամիսներով:

Իսկ այլո՞ւր: Տակաւին մինչեւ այս օրերը շարունակուող հալածանքները, ուժբազորներն ու տեղահանութիւնները, որոնք մարդկային ամբողջ գանգուածներ կը դարձնեն անօթեւան, անպաշտպան, իսկապէ՛ս աղէտեալ...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Ghadir Meat & Restaurant
T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

Sutton BAKERY AND FINE FOODS
OPEN 7 DAYS A WEEK!
WEDNESDAY 7:00 - 7:00
SATURDAY 6:00 - 6:00
SUNDAY 8:00 - 5:00

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

ANI Restaurant

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbedian@hotmail.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5

Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

I.D.A.
Part of the **Boehringer** family of pharmaceuticals.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.
2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈՒԱՊԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

Յակոբ Համամեան (1932-2017)

Յակոբ Համամեան ծնած էր 18 Դեկտեմբեր 1932-ին, Հայաստան, Պէյրուսի: Զաւակն էր Վահան եւ Հռիփսիմէ (Տէմիրճեան) Համամեանի: Անոնց ջերմ յարկը ճոխացած էր 3 աղջիկներով եւ 3 մանչերով:

Յակոբ իր կրթութիւնը եւ ուսումը ստացած էր Յիսուսեան Սէն Կրէկոր ձեռնարանին մէջ:

Յետ ուսումնառութեան, նետուած էր ոսկերչական ասպարէզ՝ աշխատելով Տօր կողքին, եւ թեթեւեղեղով տան ապրուստը հոգալու անոր պատասխանատուութիւնը: Յակոբ շատ շուտ տիրացած էր արհեստին գաղտնիքներուն եւ դարձած արուեստագէտ վարպետ:

Իր մանկութենէն մեծցած էր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան շարքերուն մէջ. եղած էր Գայլիկ, Արի եւ Երէց. թէ՛ մասնաճիւղային եւ թէ՛ շրջանային մակարդակով՝ սկստուական աշխատանքներու պատասխանատու խմբագետ, նաեւ՝ սկստուական Խորհուրդներու երկարամեայ անդամ: Սկստուական իր գործունէութեան հետ միաժամանակ, 1960-ական թուականներուն, իբր ՀՄԸՄի անդամ մասնակցած էր ողիմպիական մրցաշարքերու:

Անջատարար ՀՄԸՄէն, պիտի ըլլար «Սիփան» Դահլիճի Միութեան հիմնադիր, միշտ ցանկալով անոր միացումը իրեն սրտածոտիկ կազմակերպութեան:

1962-էն սկսեալ եւ երկար տարիներ մաս կազմած էր թէ՛ մասնաճիւղային եւ թէ՛ շրջանային յանձնախումբերու եւ վարչութիւններու: Ապա ընտրուած էր ՀՄԸՄի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամ:

ՀՄԸՄի նշանաբանին՝ «Բարձրացիր բարձրացուր»-ին համաւատարիմ՝ ստարած էր անոր վերելքին: Արժանացած էր անոր Մառապուտեան շքանշանին, նաեւ Արժանեաց շքանշանին:

Իր ոսկերչական ասպարէզը համբաւ մը շինած էր շուրջը: Ան 40 տարիներ ստանձնած էր Լիբանանի Ոսկերչներու Արհեստակցութեան ատենապետի պաշտօնը: 2004-ին, Հայ Ոսկերչներու Համաշխարհային Միութեան կողմէ՛ վարպետի կոչում պիտի ստանար:

ՀՄԸՄի առաքելութեան մէջ իր ներդրումին քովն ի վեր՝ ժամանակ մըն ալ ծառայած էր որպէս խնամակալ Ազգային Թորգոմեան եւ Չափապահեան Վարժարաններուն: Եւ դեռ՝ Խորէն Ա. եւ Գարեգին Բ. Կաթողիկոսներու ժամանակ ի՛նք պիտի ըլլար յուշանուէրներուն եւ շքանշաններուն պատրաստողը:

Այս ազգանուէր ճանապարհորդութեան մեծ մասին մէջ, ան վայելած էր իր տիկնոջ՝ Աշխէն Պէօյլիքեան-Համամեանի համբերութիւնը եւ քաջալերանքը: Անոր հետ իր երիտասարդ բոյնին մէջ ծնած էին Վահանը եւ Հուրին, որոնցմէ ունեցած էր 3 թոռներ, եւ ծոռ մը:

Յակոբ Համամեան իր կեանքը վերածեց իմաստալից պայքարի՝ ըստ իր ամենէն սիրած երգին, որ «Երբ ալեկոծ» է: Եկեղեցւոյ կարգը կատարուեցաւ Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ մէջ, Երեքշաբթի 14 Նոյեմբերին: Մարմինը ամփոփուեցաւ Իւրժէլ Պուրժիի գերեզմանատան մէջ, Փետր, Լաւալ:

Սիմոն Մնակեանի յիշատակին

Իրաւամբ դժուար է մահագրութիւն գրել կամ դամբանական խօսիլ հարազատի մը, ընկերոջ մը, մտերիմի մը, հուսկ՝ սիրելիի մը:

Շատերուն ծանօթ Սիմոն Մնակեանը արդէն առյաւէտ բաժնուած է մեզմէ: Անողորմ հիւանդութիւնը շատ արագ խլեց անոր կեանքը ու առաւ-տարաւ զինք անդենական: Եւ հիմա երբ չկայ ան, հարց կու տանք, թէ ի՛նչ ձգեց իր ետին՝ իբրեւ ազգային, մշակութային, կուսակցական նուիրեալ:

Սիմոնը ամէն բանէ առաջ եղաւ մշակոյթի մարդ ընդհանրապէս եւ հայ մշակոյթի երկրպագու՝ յատկապէս, որուն ծառայեց ամբողջ կեանք մը՝ բանիւ եւ գործով: Պէյրուսի ձեռնարանի շրջանաւարտ, լիբանանահայ բեմէն մինչեւ Պելճիքա, ուր մասնագիտական ուսում ջամբեց թատրոնի ու գրականութեան մէջ, ապա մինչեւ Ֆրանսա, ուր ապրեցաւ շուրջ չորս տասնամեակ, եւ ուր կազմեց ընտանիք, Սիմոնը եղաւ մշտական ներկայութիւն: Ոգի ի բուն կառչեցաւ մեր մայրենիին, պայքարեցաւ յատկապէս արեւմտահայերէնի անաղարտ պահպանութեան ի խնդիր, բեմադրեց, դեր խաղցաւ, բեմադրեց՝ յամառօրէն, համոզումով, արհամարհելով յաճախ աժան, անորակ, դատարկ, ծանծաղ ու անհիմն աշակէտ կոչուած չակերտեալ այն տեսակետները, թէ՛ «զո՞վ կը հետաքրքրէ մեր օրերուն հայերէնով թատրոնը»:

Յատկապէս Մարտէլի մէջ մեծ է Սիմոնին երախտիքը, այս անգամ ոչ միայն թատրոնի, գիրի, գրականութեան, արուեստի անդամատանին մէջ, այլ նաեւ՝ ազգային-կուսակցական: Ան երկար տարիներ իբրեւ յանձնառու համագործակցական անխնայ ծառայեց Մարտէլի ձեռնարանին՝ որպէս պատասխանատու մարմինի անդամ: Միաժամանակ ան անսայթաք գործեց գաղափարական իր շարքերուն մէջ՝ թէ՛ իբրեւ պարզ ընկեր, թէ՛ իբրեւ ամբողջ սերունդի մը պատանեկան-երիտասարդական վարիչ-գաստիարակ, թէ՛ իբրեւ կոմիտէի անդամ, թէ՛ իբրեւ Կեդրոնական կոմիտէի անդամ: Ամէնուրեք գործեց լուռ, համեստ, բարի, ազնիւ, մաքուր ու պարկեշտ վարքագիծով, յար եւ նման՝ իր նկարագրին, Դահլիճութեան գաղափարախօսութեան, Մրազիւրի ու Կանոնագիրին նկատմամբ խոր հաւատքով ու մանաւանդ ժողովրդավար ուղեգիծով: Հաճելի էին Սիմոնին հետ երկար, անկեղծ ու սրտբաց մեր գլուխ-գլխի զրոյցներն ու քննարկումները՝ ծխախոտի անյապ ապառուծով ու սուրճի կամ գինիի ըմբռնումով, կամ՝ ժողովներու մէջ մեր բանավէճերը, մանաւանդ երբ խիստ տարակարծիք ըլլայինք: Ան միշտ կը հիմնաւորէր իր ընդդիմութիւնը կամ տարակարծութիւնը, մինչեւ վերջին հանգրուան անհաճանջ կը պայքարէր անոր ի պաշտպանութիւն, մինչեւ՝ տուեալ հարցի քուէարկութիւն. այստեղ է միայն, որ կը զիջէր մեծամասնութեան կամքին դիմաց, կ'ընդունէր ու կը յարգէր այդ որոշումը ու կը հետեւէր անոր, նոյնիսկ եթէ դժմ քուէարկած էր ինք այդ հարցին, կէտին կամ տեսակետին: Քիչեր այսօր ունին Սիմոնին այս սքանչելի եւ վեհ վարքագիծը, ժողովրդավարական ըմբռնումը, որ խորքին մէջ յատուկ է, բառին իսկական իմաստով, դաշնակցականին: Եւ ահա ամէնէն աւելի ա՛յս երեւոյթն է, որ պիտի փնտռենք, եւ որ պիտի պակսի մեզի իր մեկնումով, կրնամ ըսել՝ վաղաժամ մեկնումով:

Վարձքը կատար, սիրելի՛ Սիմոն, ընկե՛ր Սիմոն: Յարգանք՝ վաստակիդ՝ Գաղափարակիցը՝ Հ. ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

Linda Kharaboyan Notaire Notary
Ձեր Լուտարական և Իրաւաբանական Խարցերն ու Թրագիրները վստահեցէք մեզի
Vos affaires. À cœur.
Therrien Couture
3111, boul. Saint-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2
t. 450 682.5514 - 855 633.6326
linda.kharaboyan@therriencouture.com
therriencouture.com

VIZUALIS optométriste
DR SHANT DONABEDIAN
Centre d'Achat Fairview · Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 · VIZUALIS.CA

PHOTO Cristal
(514) 744 4313
Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement
Video - Reproduction
647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3
photocrystal@hotmail.com
www.photocrystal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers
Ապահովագրական գրասենեակ
KRIKOR ABRAKIAN **VAHAN MATOSSIAN**
970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager
COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT
3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI MIRABEL
450-430-2650
Taxi Mirabel Հայկական Խաւտատուքիներ կարիքը ունի 20 հայ թաքսի վարորդի Միրապէլ շրջանին մէջ: Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:
Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

RE/MAX RE/MAX 3000 inc. Agents immobilières
Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker
C 514.519.3543
B 514.333.3000

ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN
POSE D'ONGLES
RÉSINE ET POUDDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOUVERTEMENT SUR ONGLES NATURELS
Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝ 514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker
Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance
11820 General Giraud Montreal, QC H4J 2H6
Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666
krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES
SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL
BEDROS NALPATIAN
442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM Metroapp Wealth Solutions Inc. License # 12147
Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders
416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

ALINE BEKEREJIAN NOTAIRE - NOTARY
180, rue Fleury ouest Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com
Լուտար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

ԳՐԱԻՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

«ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆԹԻՔ»

ի նպաստ Ազգային Առաջնորդարանին
Կիրակի, 4 Փետրուար 2018-ին, Թորոնթոյի Հայ Կեդրոն
Շարաք, 10 Փետրուար 2018-ին, Մոնթրէալի Հայ Կեդրոն

**ՀՄԸՄ Գանատայի Շրջանի 48-րդ Մարզական Խաղեր
Լաւալ 2018**

Նուիրուած ՀՄԸՄ-ի Հիմնադրութեան 100-ամեակին

Ս. ՅԱԿՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ «Վ. Ե. Ա. ՍԱՐԱՖԵԱՆ» ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ
ԵՒ «ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ» ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ **ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՐՈՅԹ**
Շարաք, 14 Ապրիլ 2018-ին

ԺՈՂՈՎՆԵՐ

**ՀՕՄ-Ի ՄՈՆԹՐԵԱԼԻ «ՍՕՍԷ» ՄԱՄՆԱՃԻՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎ.** Երեքշաբթի, 5 Դեկտեմբեր 2017-ին: Երեկոյեան ժամը 7:30ին հիւրա-
սիրութիւն, 8:00-ին՝ ժողով:

ՄՈՆԹՐԵԱԼ

**Համագայինի վերանորոգում «Մուշեղ Իշխան» գրադարանի
ձմեռան ժամանակացոյց.** Նոյեմբեր, Դեկտեմբեր, Յունուար եւ Փետրուար:
Երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը կ.ե. ժամը 12:00-4:00 իսկ Կիրակի օրերը
առաւօտեան ժամը 11:00-էն կ.ե. ժամը 2:00: Մոնթրէալի Հայ Կեդրոն, գետնա-
յարկ, ՀՕՄ-ի Ծաղկոցին կից - 514 337-7753: Գրադարանը բաց է գրասէր հա-
սարակութիւնը գոհացնելու համար:

**Համագային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան «Թէյ, սուրճ
եւ կարծիքներ»** ակումբ «Այվազովսկիի Հայկականութիւնը՝ Ծովանկարչու-
թեան Ընդմէջէն» նիւթը կը ներկայացնէ՝ Արուեստարան Դոկտ. Մովսէս Ծի-
րանի Հերկելեան: Զորեքշաբթի 13 Դեկտ. 2017, ժամը 7:30-էն սկսեալ, Հայ Կեդ-
րոնի Ա. Ահարոնեան սրահէն ներս: Հիւրասիրութիւն, մուտքի նուէր՝ \$5,
մանրամասնութեանց համար գրել՝ diroug@gmail.com հասցէին:

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ՀՄԸՄ Լաւալի վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ Համամե-
տան ընտանիքին եւ հարազատներուն եղբ. **ՅԱԿՈՒ ՀԱՄԱՄՃԵԱՆ**-ի մահուան
առիթով:

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտ-
նէ ընկ. Աննա Պուկարեանին եւ ընկ. Յակոբ Պուկարեանին իրենց մօրաբ-
րոջ եւ հարազատին՝ **ԼՈՒՍԻՆ ՔԻՐԵՄԹՅԻ-ԶԱՔԱՐ**-ի մահուան առիթով:

ԺՈՂՈՎՆԵՐ

**ՀՕՄ-Ի ԼԱԻԱԼԻ «ՇՈՒՇԻ» ՄԱՄՆԱՃԻՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴ-
ՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.** Զորեքշաբթի, 6 Դեկտեմբեր 2017-ին, երեկոյեան ժա-
մը 8:00-ին, Լաւալի Հայ Կեդրոն:

**ՀՕՄ-Ի ԹՈՐՈՆԹՈՅԻ «ՌՈՒԲԻՆԱ» ՄԱՄՆԱՃԻՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱ-
ՆՈՒՐ ԺՈՂՈՎ.** Երեքշաբթի, 5 Դեկտեմբեր 2017-ին, երեկոյեան ժամը 8:00-ին,
Թորոնթոյի Հայ Կեդրոն:

**WORKER
NEEDED – WITH
EXPERIENCE**

1. Bodyman/Frame specialist
2. Painter and/or finishing/prep technician
Call Mike (514) 245-1228 or (450) 686-8866
e-mail: info@interlux.ca

Ascenseur **Adams** Elevator
Services Inc.
PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4
RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.**

Eddie, Pedro, Joyce Oughourlian

**«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը
կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝**

Videotron:
HD616 կամ SD16

Bell Fibe:
HD1216 կամ SD216

Շարաք- 08:30 (առաջին սիտուալ)
Կիրակի- 07:30am
Երկուշաբթի- 08:00am
Երեքշաբթի- 08:30am
Չորեքշաբթի- 7:30pm
Հինգշաբթի- 10:30am, 8:30pm
Ուրբաք- 5:00pm
Ուղիղ արձակում՝ www.icitelevision

SUDOKU - ՄԻՏՈՒՄ

Աստիճանաւորում՝
միջին

			2				5
8					9		4
			1	8			2
3						5	9
5							7
	6						4
							6
		1		3	4	9	8
9	2		6	5			3

horizon

**HORIZON
Hebdomadaire arménien
Armenian Weekly**
Publié par / Published by
**Les Publications Arméniennes
(1991)**
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

**Abonnement annuel /
Yearly subscription
Canada**
2^e classe - 2nd class: \$80
plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Eshramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylvia@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales
du Québec et du Canada - ISSN 0708580X

Վարիչ Խմբագիր՝
Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու՝
Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա
Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր՝
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-
համեան, Թինա Սիլվահեան
Չեռատրում՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թիթիկեան

**Թորոնթոյի
Ներկայացուցիչներ՝**

Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
Ժագ Վարպետեան, (416) 722-9225

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնքաչ

**Financé par le
gouvernement
du Canada**

**Funded by the
Government
of Canada**

Canada

ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ



ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) - Այս շաբաթ աստղերը քեզի պիտի պարզեցնեն հաւասարակշռութիւնը եւ աշխուժութիւնը: Այս մէկը պիտի սատարէ քու ծրագիրներուդ իրագործման: Դիւանագիտական յարաբերութիւններդ բաւական յաջող կ'ընթանան այս շրջանին:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) - Մարմնական կարողութիւններդ բաւական բարձր են այս շաբաթ, այդ պատճառով ալ գործերդ շատ լաւ կ'ընթանան, միեւնոյն ժամանակ ինքզինք փաստելու պահանջը կը զգաս ամէն վայրկեան, պետք չունիս ինքզինքդ չարչրկելու այդքան:

ԵՐԿՈՒՐԵԿ (22 Մայիսէն 23 Յունիս) - Գործընկերներդ եւ գործատերդ շատ գոհ են քեզմէ այս շրջանին: Միշտ մէջտեղերն են եւ բոլոր հարցերուն դրական ներդրում կ'ունենաս: Սակայն այս բոլորը շուրջիններուդ նախանձը կը շարժէ, զգոյշ ըլլալու եւ անոնց նկատմամբ:

ԽԵՅՊԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) - Նոր գաղափարներդ եւ առաջարկներդ յայտնելու մի՛ վարանիր, գործընկերներդ եւ գործատերդ հասկացողութիւն պիտի ցուցաբերեն անոնց հանդէպ եւ բաւական ուրախ պիտի ըլլան այս փոփոխութիւններով եւ նորութիւններով:

ԱՌԻԾ (24 Յունիսէն 23 Օգոստոս) - Ինքզինքդ վտանգի կ'ենթարկես այս շրջանին, կ'ուզես նպատակիդ հասնիլ ամէն գնով, բայց անբարենպաստ պայմանները շղային դարձուցած են քեզ, այդ պատճառով ալ ժխտական եւ յարձակողական եղած է վերաբերմունքդ շուրջիններուդ հետ:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) - Այս շրջանին ատելի զօրաւոր կը զգաս ինքզինքդ, սովորականէն շատ ատելի բարձր է ներուժդ մասնաւոր այս շաբաթ, հետեւաբար օգտուիր այս առիթէն եւ իրագործէ այն ինչ որ կը հետաձգէիր յաճախ: Բարեբեր շաբաթ մըն է:

ԿՇԻՈՔ (24 Սեպտեմբերէն 23 Յոկտեմբեր) - Յոգ տար առողջութեանդ այս շաբաթ, թշնամիներով շրջապատուած ես, նախանձոտ մարդիկ գիշեր-ցերեկ կը հետապնդեն լուրերդ, այս մէկը կը մտատանջէ քեզ, այդ պատճառով ալ կրնաս հիւանդանալ, հետեւաբար զգոյշ եղիր:

ԿՄՐԻԾ (24 Յոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Անհոգ վերաբերմունք ունիս առողջութեանդ նկատմամբ, այս մէկը կը վնասէ քեզի, հոգ տար ուտելիքներուդ, սննդարար ճաշատեսակներով սնուիր այս շրջանին, որովհետեւ բաւական ճնշուածութիւն կ'ապրիս գործիդ մէջ:

ԱՂԵՂԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Մի՛ փորձեր կարծիքդ պարտադրել շուրջիններուդ, պարտաւոր են յարգել իրենց կարծիքները եւս, միշտ չէ, որ քու մտածածդ ճիշդ է, համբերող եւ լսող եղիր, շատախօսութենէ հեռացիր այս շրջանին, որպէսզի անմաստ զրոյցներու չբռնուիս:

ԱՅԾԵՂՋԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Աւելորդ ինքնավստահութիւն մը կը տիրէ տրամադրութեանդ այս շաբաթ, շուրջիններդ ալ կը նկատեն այս մէկը, սակայն կը փորձեն հասկացողութեամբ վերաբերիլ, փոխէ՛ այս ընթացքդ, այլապէս պիտի կորսնցնես սրտակից բարեկամներդ:

ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար) - Կը փորձես քանի մը գործ միեւնոյն ժամանակ ընել, այս մէկը կը ջլատէ քեզ, հակառակ որ դուն ոչ մէկ տկարութիւն կը զգաս հիմակուհիմա, սակայն եթէ այսպէս շարունակես յանկարծ անախորժելի անակնկալներու դէմ յանդիման պիտի գտնուիս:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Այնքան հաւատարակշռուած է վերաբերմունքդ, որ գործատիրոջդ ուշադրութիւնը կը գրաւէ, ան մեծապէս կը վստահի քեզի: Օգտուէ՛ այս առիթէն եւ ամսականի յաւելում պահանջէ, անմիջապէս պիտի ընդառաջէ, որովհետեւ գոհ է քեզմէ:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ ԱՌԱՋՆ. ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Էտմոն Ասլիկիւի մահուան
 Տ. եւ Տ. Կարպիս Կայծակ 40
 Զարուհի Շահապազ 30
 Ժան, Գէորգ Արաւանիւիւզլու, ընտք. 50
 Տ. եւ Տ. Ոսկան Հազարապետեան 50
 Մասին Պազարեան 250
 Մարի, Աւագ Աւագեան 250
 Ճան Երկանճեան ամ. 200
ՕՇան Աւագերէցեանի մահուան
 Պերճ Մելիքեան 30
 Թամար Եսփուճեան 100
 Արամ, Այտա Մելիքեան 200
 Վարուժան, Տիանա Միսեան 50
 Մայք, Գարին Կիրակոսեան 100
 Յովհաննէս Նաճարեան 25
 Տ. եւ Տ. Գէորգ Արքեան 50
Առողջութեան համար մի ոմն 10
Սիմոն Մնակեանի 40-ին (Մարտի)
 Վաչէ, Սեդա Թարիգեան 50
Գէորգ Տարազճեանի 40-ին, Գրիգոր Տարազճեանի 6-րդ տարեկիցին
 Ռուպեր, Քրիսթին, Գէլըն, Հրակ, Փաթիլ Տարազճեան 20
 Տ. եւ Տ. Բաֆֆի Տարազճեան, զ.կ.ք. 20
 Յակոբ, Լուսին Ասուրեան, դուստր.
 Պերճուհի, Մայտա Տարազճեան 30
 Տ. եւ Տ. Գրիգոր Պուտաբեան, զ.կ.ք. 20
 Տ. եւ Տ. Յակոբ Նահապետեան, զ.կ.ք. 20
 Տ. եւ Տ. Ճորճ Ներսէսեան 20
 Անի Սիմոնեան 20
Սարգ Կալենցի 7-օրեքին
 Սօսի Կալենց,
 Արա, Միշէլ, Թալին Կալենց 40
Անահիտ Լալեանի Հոգւոյն
 Գէորգ Լալեան 100
 Տ. եւ Տ. Պերճ Լալեան, զ.կ.ք. 140
 Տ. եւ Տ. Արա Լալեան, զ.կ.ք. 20
 Կրէյս Գաբրիէլեան 100
 Զուէն, Քնար Լալեան, զ.կ. 100
Միհրան Զէրտէլեանի 2-րդ տարեկիցին
 Պահիա Զէրտէլեան, դուստր՝ Մարալ, Նաթալի 50
Արթին, Սիլվա, Սահակ, Գաբրիէլ, Յակոբ, Փօլ Աղամեաններու,
Սամիրա Ալլուշի, Մարո Պապայեանի, Մինաս Թրթրեանի, Սարգիս Մերեսեանի Հոգւոյն, Ալլուշ գերզաստանի ննջեցելոց
 Լինա Աղամեան 15
Լուսածին Տարազճեանի 7-րդ տարեկիցին,
Տարազճեան գերզաստանի ննջեցելոց
 Տարազճեան ընտք. 30
Ալիս Իսփէճեանի 12-րդ տարեկիցին
 Յակոբ, Սիլվի, Ժուլիա, Արա Իսփէճեան 300
Գրիգոր Պալապանեանի Հոգւոյն
 Լինտա Պալապանեան, զ.կ.ք., թոռներ 100
Նազար Նազարեանի Հոգւոյն
 Նժդեհ, Թալին Նազարեան, զ.կ.ք. 20
Հոփի Պարսոմեանի Հոգւոյն
 Համբիկ, Սոֆի Սարգիսեան, զ.կ.ք. 20
 Տիգրան, Մարիան Գուլումճեան, զ.կ.ք. 100
Գէորգ, Սիլվի Էքմէքճեաններու Հոգւոյն
 Յակոբ, Յասմիկ Գասապեան, զ.կ.ք. 10
Գարո Ապաճեանի 2-րդ տարեկիցին,
Անդրէաս Պասաճեանի, Նուարդ Ապաճեանի Հոգւոյն
 Մարինա Ապաճեան 10
 Յարութ, Մարալ Ապաճեան, զ.կ.ք. 20
Յակոբ Էսաճեանի մահուան
 Նեկտար Սահակեան 50
 Էրոյ, Անահիտ Էրեան 25
Ժան Նանճեանի մահուան
 Տ. եւ Տ. Արսինէ Նանճեան,

Աթօմ Էկոյեան, զ.կ.՝ Արշիլ 1500
 Ս. Յակոբի դպրաց դաս 100
 Տ. եւ Տ. Ժան Բրուտեան 50
 Տ. եւ Տ. Ներսէս Անանեան 20
 Ճագ, Գլէք, Իրմա, Գարլա Նանճեան 150
 Ազնիւ Աշճեան, զ.կ.ք. 100
 Տ. եւ Տ. Աւետիս Գապաքեան 150
 Տ. եւ Տ. Նազո Պաշիկեան 20
 Վազգէն Տէր Գալուստեան 100
 Երան Պանքեան 25
 Յասմիկ Տէմիրճեան, Ղասսան Սլուքի 50
 Յարութ Տէմիրճեան, զ.կ. 50
 Սալբի Մարգարեան, Նորայր Գասբըր 100
 Սիլվի Պազարեան 100
 Թէնի Նիկողոսեան 100

ՀՕՄԻ «ՌՈՒՐԻՆԱ» ՄԱՍՆԱ-ՃԻԿՂԻՆ, ԹՈՐՈՆԹՕ
 Պերճ Մեսրոպ 3000
 Յակոբ եւ Թագուհի Թնճուրեան 50
 Հրաչ եւ Ազո Գոլանճեան 100
Տոճմիկ օրուան առիթով
 Յասմիկ Ժանտու 50
 Ժագ եւ Կարինէ Տէր Յովակիմեան 50
 Վահէ եւ Անարէլ Սաթուրեան 50
 Լուսին Մէնկէլեան 100
 Նուարթիս եւ Ալիս Շիթիլեան 250
 Հէնրի եւ Հէնրիէթ Աբրահամեան 100
 Պերճ Բարզէն 100
 Ըսթիվ Թոմարճի 100
 Յարութ եւ Սիլվի Գալթակեան 100
 Առաքել եւ Նորա Պաշիկեան

250
 Ռիթա Շահեան 1000
 Տրքթ. Գէորգ Ռէյմոնտ եւ ընտանիք 500
 Հրանդ եւ Լուսին պապլանեան 100
 Արամ եւ Թէլի Իշնար 100
 Ժագ եւ Մերելլա Գանոյեան 50
 Cassandra Pharmacy Inc. 500
 Մկրտիչ եւ Անժէլ Մանուկեան 100 ամ
 Յովհաննէս եւ Գարօլին Շմաւոնեան 100 ամ
Ընկերային Մատուցութեան Գրասենեակին
 Կարօ եւ Նորա Սարգիսեան 100
 Գրիգոր եւ Յասմիկ Սարգիսեան 50

Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻՉՈՆ» յատագիրը կարելի է դիտել Շաբաթ առաւօտները ժամը 9:00-էն 10:00, իսկ նոյն յայտագրի կրկնութիւնները Կիրակի օրերը առաւօտեան ժամը 7:00-8:00 եւ Երեքշաբթի օրերը կեսօրուայ ժամը 12:00-1:00 **OMNI 1** կայանէն:

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Շաբաթ- 08:30 (առաջին տխումս)
 Կիրակի- 07:30am
 Երկուշաբթի- 08:00am
 Երեքշաբթի-08:30am
 Չորեքշաբթի- 7:30pm
 Հինգշաբթի- 10:30am, 8:30pm
 Ուրբաթ- 5:00pm
 Ուղիղ արձակում՝ www.icitelevision

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Հովանաւ որութեամբ
 Գանատայի Հայոց թեմի Առաջնորդ
Գերշ. Տ. Բարզէն Արք. Չարեանի

ԵՆՈՐՉԱՆՈՒՄ՝
«ԹԱՔՆՈՒԱՏ ԳԱՆՁԴ ԳՏՆԵԼ՝
Լուռ Աղօթքի Ճամբան»
 գրքին

Հեղինակ՝ Պենինիոս Օ՛րուրք
 Թարգամանիչ՝ Կարօ Սրկ. Նոյնուտեան

Գիրքը կը ներկայացնէ
Գերայ. Գեղարդ Օ. Վրդ. Գիւսպէկեան
 Կիրակի, 26 Նոյեմբեր 2017-ի երեկոյեան ժամը 7.00
 Սոնորեակի Հայ Կեդրոնի «Միարձեան» սրահ

Հրատի բոլորին



Innové pour exalter

GRUPE NISSAN
GABRIEL

NISSAN QASHQAI 2017

**STATIONNEZ-LE COMME UNE AUTO.
CHARGEZ-LE COMME UN VUS.**



Qashqai SL illustré*

PRIX À L'ACHAT À PARTIR DE

22 063\$*

Transport et
préparation inclus.
Pour le Qashqai S

Caractéristiques livrables sur le Qashqai SL



SYSTÈME DE
FREINAGE
D'URGENCE AVEC
 DÉTECTION DE
PIÉTONS*



TRACTION
INTÉGRALE
INTELLIGENTE



VOLANT
CHAUFFANT
GAINÉ DE CUIR



SYSTÈME
D'AVERTISSEMENT
SUR L'ANGLE
MORT



SYSTÈME
D'ALERTE
DE TRAFIC
TRANSVERSAL*



RÉTROVISEURS
ÉLECTRIQUES
CHAUFFANTS

NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8
514 509-7777 | nissangabrieljeantalon.com

◀ OUVERT LES SAMEDIS ▶

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7
514 324-7777 | nissangabriellanjou.com

◀ OUVERT LES SAMEDIS ▶

*Livraison du Nissan Qashqai 2017 à partir du 5 juin 2017. Quantité limitée. Frais de transport et de préparation (1 750\$) peuvent être appliqués selon les modèles. Les frais de 100\$ pour le climatiseur (le cas échéant), les rabais du manufacturier et les contributions des concessionnaires sont compris. Cette offre ne peut pas être combinée à aucune autre promotion. Taxes, immatriculation, droits spécifiques sur les pneus neufs (15\$) et assurances en sus, et exigés à la signature du contrat. Certaines conditions s'appliquent. Visitez Nissan Gabriel Jean-Talon ou Nissan Gabriel Anjou pour tous les détails.



BARRY







KAREN



GARO

KAZANDJIAN



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN.com

CLASSÉS PARI MI LES MEILLEURS COURTIER S RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY.com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5